17764

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

324(47)
Խ-11

«ԲՈԼՇԵՎԻԿ» — 1937

324(47)
Խ-11

15 JAN 2010
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

26 SEP 2006

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԲՈԼՇԵՎԻԿ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1937

1 1 SEP 2013

17764

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի VII գումարման 4-րդ նստաշրջանի վորոշումը

«ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշում է.

«ԽՈՐՀԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՍՏԱՏԵԼ։

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ա. ԳՈՒՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 9 հուլիսի 1937 թ.

2055
38

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ I

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 1. ԽՍՀՄ Սահմանադրության 134-րդ հոդվածի հիման վրա ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորների ընտրությունները ընտրողների կողմից կատարվում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ։

ՀՈԴՎԱԾ 2. ԽՍՀՄ Սահմանադրության 135-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրությունները ընդհանուր են. ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասսայական և ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի մեջ, բացառությամբ խելագարների և այն անձանց, վորոնք դատարանով դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով։

ՀՈԴՎԱԾ 3. ԽՍՀՄ Սահմանադրության 136-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով։

ՀՈԴՎԱԾ 4. ԽՍՀՄ Սահմանադրության 137-րդ հոդվածի հիման վրա կանայք տղամարդկանց հետ հավասարապես ոգտվում են ընտրելու և ընտրվելու իրավունքով։

ՀՈԴՎԱԾ 5. ԽՍՀՄ Սահմանադրության 138-րդ հոդվածի հիման վրա կարմիր բանակի շարքերում գտնվող քաղաքացիները բոլոր քա-

ղաքացիների հետ հավասարապես ոգտվում են ընտրելու և ընտրվելու իրավունքով։

ՀՈԴՎԱԾ 6. ԽՍՀՄ Սահմանադրության 141-րդ հոդվածի հիման վրա ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական ոկրուգների։

ԳԼՈՒԽ II

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7. Ընտրողների ցուցակները քաղաքներում կազմում է աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդը, իսկ ռայոնների բաժանված քաղաքներում—ռայոնական Խորհուրդը. գյուղական վայրերում — աշխատավորների պատգամավորների գյուղական (ստանիցայի, գյուղի, խուտորի, ղշլաղի, առվի) Խորհուրդը։

ՀՈԴՎԱԾ 8. Ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ընտրությունների որը 18 տարին լրացրած այն բոլոր քաղաքացիները, վորոնք ունեն ընտրական իրավունք և ցուցակները կազմելու մոմենտին բնակվում են (մշտապես կամ ժամանակավորապես) տվյալ Խորհրդի տերիտորիայում։

ՀՈԴՎԱԾ 9. Ընտրողների ցուցակների մեջ չեն մտցվում այն անձինք, վորոնք դատավճռներով զրկված են ընտրական իրավունքներից՝ դատավճռով սահմանած ընտրական իրավունքներից զրկելու ամբողջ ժամանակամիջոցում, ինչպես նաև այն անձինք, վորոնք որենքով սահմանված կարգով ճանաչված են խելագար։

ՀՈԴՎԱԾ 10. Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ յուրաքանչյուր ընտրական շրջանի այբբենական կարգով, ցույց տալով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքն ու բնակավայրը, և ստորագրվում են աշխատավորների պատգամավորների Խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից։

ՀՈԴՎԱԾ 11. Ընտրողներից վոչ վոք չի կարող մտցվել մեկից ավելի ընտրական ցուցակի մեջ։

ՀՈԴՎԱԾ 12. Զինվորական մասերում և զինվորական միավորումներում յեղած ընտրողների ցուցակները կազմում է հրամանատարությունը՝ հրամանատարի և զինվորական կոմիսարի ստորագրություններով։ Մյուս բոլոր զինվորական ծառայողներն ընտրողների ցուցակ-

ներն են մտցվում ըստ բնակավայրի՝ աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդների կողմից։

ՀՈԴՎԱԾ 13. Ընտրություններից 30 որ առաջ աշխատավորների պատգամավորների Խորհուրդը կախում է ընտրողների ցուցակները՝ ի տես ընդհանուրի կամ ընտրողների հասար հնարավորություն է ապահովում այդ ցուցակների հետ ծանոթանալու Խորհրդի շենքում։

ՀՈԴՎԱԾ 14. Ընտրողների ցուցակների բնագիրը պահվում է համապատասխանորեն աշխատավորների պատգամավորների Խորհրդում և զինվորական մասում կամ զինվորական միավորման մեջ։

ՀՈԴՎԱԾ 15. Այն դեպքում, յերբ ընտրողն իր բնակավայրը փոխում է ընտրողների ցուցակի հրապարակման և ընտրությունների որվա միջև ընկած ժամանակամիջոցում, աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդը կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով նրան տալիս է «քվեարկման իրավունքի վկայական» և ընտրողների ցուցակում նշում է՝ «մեկնեց». նոր բնակության կետում—մշտական կամ ժամանակավոր—ընտրողը մտցվում է ընտրողների ցուցակը՝ ներկայացնելով ինքնության վկայական, ինչպես նաև «քվեարկման իրավունքի վկայական»։

ՀՈԴՎԱԾ 16. Ընտրողների ցուցակում յեղած անճշտության վերաբերյալ դիմումը (ցուցակների մեջ չմտցնելը, ցուցակներից հանելը, ազգանվան, անվան և հայրանվան աղավաղումը, ընտրական իրավունքներից զրկվածներին սխալ կերպով ցուցակների մեջ մտցնելը) տրվում է աշխատավորների պատգամավորների այն Խորհրդին, վորը հրապարակել է ցուցակները։

ՀՈԴՎԱԾ 17. Աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր է յերեք որվա ժամկետում քննարկել ընտրողների ցուցակում յեղած անճշտության վերաբերյալ յուրաքանչյուր դիմում։

ՀՈԴՎԱԾ 18. Ընտրողների ցուցակում յեղած անճշտության վերաբերյալ դիմումը քննարկելուց հետո աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր է կամ անհրաժեշտ ուղղումներ մտցնել ընտրողների ցուցակում, կամ դիմողին տալ գրավոր տեղեկանք նրա դիմումը մերժելու պատճառաբանությունների մասին. աշխատավորների պատգամավորների Խորհրդի վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում դիմողը կարող է դանգատ տալ ժողովրդական դատարանին։

ՀՈԴՎԱԾ 19. Ժողովրդական դատարանը յուրաքանչյուր դատական դռնարաց դիտում, հրավիրելով դիմողին և Խորհրդի ներկայացուցչին, քննարկել ցուցակում յեղած անճշտության վերաբերյալ գանգատը և իր վճիռն անհապաղ հաղորդել ինչպես դիմողին, այնպես եվ Խորհրդին։ Ժողովրդական դատարանի վճիռը վերջնական է։

ԳԼՈՒԽ III

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 20. ԽՍՀՄ Սահմանադրության 34-րդ հոդվածի հիման վրա Միության Խորհուրդն ընտրվում է ԽՍՀՄ քաղաքացիների կողմից, ըստ ընտրական ոկրուգների։

ՀՈԴՎԱԾ 21. Միության Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգը կազմվում է՝ ոկրուգին 300.000 բնակիչ սկզբունքով։ Միության Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգ ուղարկում է մեկ պատգամավոր։

ՀՈԴՎԱԾ 22. ԽՍՀՄ Սահմանադրության 35-րդ հոդվածի հիման վրա Ազգությունների Խորհուրդն ընտրվում է ԽՍՀՄ քաղաքացիների կողմից ըստ ընտրական ոկրուգների։ Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգը կազմվում է հետևյալ սկզբունքով. Ցուրաքանչյուր միութենական հանրապետության մեջ՝ 25 ոկրուգ, յուրաքանչյուր ինքնավար հանրապետության մեջ՝ 11 ոկրուգ, յուրաքանչյուր ինքնավար մարզում՝ 5 ոկրուգ և յուրաքանչյուր ազգային ոկրուգում մեկ ընտրական ոկրուգ։ Ազգությունների Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգ ուղարկում է մի պատգամավոր։

ՀՈԴՎԱԾ 23. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգները կազմվում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից։

ՀՈԴՎԱԾ 24. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգների ցուցակը հրապարակում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը՝ միաժամանակ նշանակելով ընտրությունների օրը։

ԳԼՈՒԽ IV

ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 25. Ընտրական բյուլետեններն ընդունելու և ձայները հաշվելու համար, ընտրական ոկրուգների մեջ մտնող քաղաքների և ռայոնների տերիտորիան բաժանվում է ընտրական շրջանների, վորոնք ընդհանուր են Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների համար։

ՀՈԴՎԱԾ 26. Ընտրական շրջանները կազմվում են քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների կողմից, ռայոնների բաժանված քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների կողմից, գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների կողմից։

ՀՈԴՎԱԾ 27. Ընտրական շրջանները կազմվում են վոչ ուշ, քան ընտրությունների 45 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 28. Այն գյուղխորհրդի տերիտորիան, վորտեղ բնակիչների թիվը յերկու հազարից ավել չէ, կազմում է, վորպես կանոն, մեկ ընտրական շրջան. յուրաքանչյուր ստանիցայում, գյուղում, դշլաղում, աուլում, վորոնք ունեն 500-ից մինչև վոչ ավելի, քան 2000 բնակիչ, կազմակերպվում է առանձին ընտրական շրջան։

ՀՈԴՎԱԾ 29. Հյուսիսային և արևելյան հեռավոր ռայոններում, վորտեղ գերակշռում են մանր բնակավայրերը, թույլ է տրվում կազմակերպել ընտրական շրջաններ վոչ պակաս, քան 100 մարդ բնակչությամբ։

ՀՈԴՎԱԾ 30. Այն քաղաքները, արդյունաբերական կետերը, ինչպես նաև գյուղերն ու գյուղխորհրդի տերիտորիան, վորտեղ բնակիչների թիվը 2000-ից ավելի յե, բաժանվում են ընտրական շրջանների՝ մի ընտրական շրջանին 1.500—2.500 բնակիչների հաշվով։

ՀՈԴՎԱԾ 31. Զինվորական մասերը և զինվորական միավորումները կազմում են առանձին ընտրական շրջաններ վոչ պակաս, քան 50 և վոչ ավելի, քան 1.500 ընտրողներով, վորոնք մտնում են ընտրական ոկրուգի մեջ ըստ այն վայրի, վորտեղ գտնվում է զորամասը կամ զինվորական միավորումը։

ՀՈԴՎԱԾ 32. Վոչ պակաս, քան 50 ընտրող ունեցող նավերը, վորոնք ընտրությունների որերին գտնվում են նավարկության մեջ,

կարող են կազմել առանձին ընտրական շրջաններ, որոնք մտնում են նավի գրանցված վայրի ընտրական ոկրուգների մեջ։

ՀՈԴՎԱԾ 33. Վոչ պակաս, քան 50 ընտրող ունեցող հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին, հաշմանդամների տներին կից ստեղծվում են առանձին ընտրական շրջաններ։

ԳԼՈՒԽ V

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 34. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ ընտրությունների որվա հրապարակման հետ միաժամանակ։

ՀՈԴՎԱԾ 35. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 12 անդամից։

ՀՈԴՎԱԾ 36. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

ա) ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայում ընտրությունների ընթացքում հետևում է «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» անշեղ կատարմանը.

բ) քննարկում է ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ գանգատները և գանգատների առթիվ վերջնական վճիռներ է կայացնում.

գ) սահմանում է ընտրական արկղների նմուշները, «քվեարկման իրավունքի վկայականի» ձևը, ընտրական բյուլետենների և նրանց ծրարների ձևն ու գույնը, ընտրողների ցուցակի ձևը, ձայները հաշվելու արձանագրությունների ձևը, ընտրված լինելու վկայականների ձևը.

դ) ցուցակագրում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի մեջ ընտրված պատգամավորներին.

ե) Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի մանդատային հանձնաժողովներին է հանձնում ընտրությունների վերաբերյալ գործավարությունը։

ՀՈԴՎԱԾ 37. Յուրաքանչյուր միութենական և ինքնավար հանրապետության մեջ, ինքնավար մարզում և ազգային ոկրուգում ստեղծվում են Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական և ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի և ազգային ոկրուգի Ընտրական հանձնաժողովներ։

ՀՈԴՎԱԾ 38. Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից ու հաստատվում են միութենական և ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների Նախագահությունների կողմից, ինքնավար մարզերի և ազգային ոկրուգների աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 39. Միութենական և ինքնավար հանրապետությունների, ինքնավար մարզի և ազգային ոկրուգի Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովները կազմվում են նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 6—10 անդամից։

ՀՈԴՎԱԾ 40. Ազգությունների Խորհրդի ընտրությունների՝ միութենական, ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի և ազգային ոկրուգի ընտրական հանձնաժողովը՝

ա) հանրապետության, ինքնավար մարզի, ազգային ոկրուգի տերիտորիայում հսկում է Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընթացքում «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» անշեղ կատարման վրա.

բ) քննարկում է Ազգությունների Խորհրդի ընտրությունների վերաբերյալ սխալ գործողությունների մասին յեղած գանգատները։

ՀՈԴՎԱԾ 41. Միության Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ոկրուգում ստեղծվում է Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողով։

ՀՈԴՎԱԾ 42. Յերկրային կամ մարզային բաժանում ունեցող հանրապետություններում Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են յերկրամասերի ու մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից, յերկրային ու մարզային բաժանում չունեցող հանրապետություններում,—հանրապետությունների Գերագույն Խորհուրդների Նախագահությունների կողմից—վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 43. Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 8 անդամից։

ՀՈԴՎԱԾ 44. Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) հսկում է աշխատավորների պատգամավորների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեների կողմից ընտրական շրջանների ժամանակին կազմակերպվելուն.

բ) հսկում է ընտրողների ցուցակները ժամանակին կազմելու և ընդհանուրի գիտությանը հաղորդելու վրա.

գ) գրանցում է Միության Խորհրդի համար առաջադրված պատգամավորների թեկնածուներին, պահպանելով ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ Դեբազուն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» պահանջները.

դ) Միության Խորհրդի ընտրությունների վերաբերյալ ընտրական բյուլետեններ և սահմանված ձևի ծրարներ է մատակարարում Շրջանային ընտրական հանձնաժողովներին.

ե) կատարում է ձայների հաշվառում և վորոշում է ոկրուգի ընտրությունների արդյունքները.

զ) ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ընտրությունների վերաբերյալ գործավարությունը.

է) ընտրված պատգամավորին վկայական է տալիս ընտրվելու մասին։

ՀՈԴՎԱԾ 45. Ազգությունների Խորհրդի ընտրությունների վերաբերյալ յուրաքանչյուր ոկրուգում ստեղծում է Ազգությունների Խորհրդի ընտրական Ոկրուգային հանձնաժողով։

ՀՈԴՎԱԾ 46. Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են միութենական ու ինքնավար հանրապետությունների Դեբազուն Խորհուրդների Նախագահությունների և ինքնավար մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից—վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 47. Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 8 անդամից։

ՀՈԴՎԱԾ 48. Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) գրանցում է Ազգությունների Խորհրդի համար առաջադրված պատգամավորության թեկնածուներին, պահպանելով ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ Դեբազուն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» պահանջները.

բ) Շրջանային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական բյուլետեններ, ըստ սահմանված ձևի.

գ) կատարում է ձայների հաշվառում և վորոշում է ոկրուգի ընտրությունների արդյունքները.

դ) ընտրությունների գործավարությունը ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և համապատասխանորեն՝ Ազգությունների Խորհրդի ընտրությունների Հանրապետական ընտրական հանձնաժողովին կամ Ազգությունների Խորհրդի ընտրությունների ինքնավար մարզի Ընտրական հանձնաժողովին.

ե) ընտրված պատգամավորին տալիս է վկայական ընտրվելու մասին։

ՀՈԴՎԱԾ 49. Շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների կողմից, իսկ ռայոններում բաժանված քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների կողմից, գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների կողմից—վոչ ուշ, քան ընտրություններից 40 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 50. Շրջանային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 4—8 անդամից։

ՀՈԴՎԱԾ 51. Շրջանային ընտրական հանձնաժողովը՝

ա) ընտրական շրջանում կատարում է ընտրական բյուլետենների ընդունումը.

բ) կատարում է Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի պատգամավորի յուրաքանչյուր թեկնածուի համար տրված ձայների հաշվառումը.

գ) ընտրությունների գործավարությունը հանձնում է համապատասխանորեն Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային և

Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 52. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Ազգությունների Խորհրդի ընտրությունների Հանրապետական ընտրական հանձնաժողովի, Ազգությունների Խորհրդի ընտրությունների ինքնավար մարզերի և ազգային ոկրուգների Ընտրական հանձնաժողովների, Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային հանձնաժողովի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի՝ ինչպես նաև Շրջանային ընտրական հանձնաժողովների նիստերը համարվում են որինական, յեթե նրանց մասնակցում է հանձնաժողովների կազմի կեսից ավելին։

ՀՈԴՎԱԾ 53. Ընտրական հանձնաժողովներում բոլոր հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում—նախագահի ձայնը տալիս է գերակշռություն։

ՀՈԴՎԱԾ 54. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների հետ կապված ծախսերը կատարվում են պետության հաշվին։

ՀՈԴՎԱԾ 55. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Ազգությունների Խորհրդի ընտրությունների Հանրապետական ընտրական հանձնաժողովները, Ազգությունների Խորհրդի ընտրությունների ինքնավար մարզի, ազգային ոկրուգի Ընտրական հանձնաժողովները, Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը, Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը և Շրջանային ընտրական հանձնաժողովներն ունեն իրենց կնիքը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով։

ԳԼՈՒԽ VI

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 56. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի թեկնածուներ առաջադրելու իրավունքը, ԽՍՀՄ Սահմանադրության 141 յոդ հոդվածի հիման վրա, վերապահվում է հասարակական կազմակերպություններին և աշխատավորների ընկերություններին—կոմունիստական կուսակցական կազմակերպություններին, պրոֆեսիոնալ միություններին, կոոպերատիվներին, յերիտասարդության կազմակերպություններին կուլտուրական ընկերություններին և ուրիշ կազմակերպություններին, վորոնք գրանցված են որենքի սահմանած կարգով։

ՀՈԴՎԱԾ 57. Թեկնածուներ առաջադրելու իրավունքն իրագործում են ինչպես աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների կենտրոնական որգանները, այնպես ել նրանց հանրապետական, յերկրային, մարզային և ռայոնական որգանները, ինչպես նաև բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ ձեռնարկություններում, կարմիր բանակայիններին ընդհանուր ժողովները՝ զորամասերում, ինչպես նաև գյուղացիների ընդհանուր ժողովները՝ կոլխոզներում, սովխոզների բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ սովխոզներում։

ՀՈԴՎԱԾ 58. Պատգամավորությունների թեկնածուները չեն կարող լինել Միության Խորհրդի ընտրությունների և Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովների, ինչպես նաև այն ոկրուգի Շրջանային ընտրական հանձնաժողովների անդամներ, վորտեղ նրանք առաջադրված են վորպես պատգամավորությունների թեկնածուներ։

ՀՈԴՎԱԾ 59. Վոչ ուշ, քան ընտրություններից 30 որ առաջ բոլոր հասարակական կազմակերպությունները կամ աշխատավորների ընկերությունները, վորոնք առաջադրում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորությունների թեկնածուներ, պարտավոր են պատգամավորությունների թեկնածուներին գրանցել համապատասխանաբեն կամ Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովում, կամ Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովում։

ՀՈԴՎԱԾ 60. Միության Խորհրդի ընտրությունների և Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են գրանցել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորությունների բոլոր թեկնածուներին, վորոնց առաջադրել են հասարակական կազմակերպությունները և աշխատավորների ընկերությունները, պահպանելով ԽՍՀՄ Սահմանադրության պահանջները և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը»։

ՀՈԴՎԱԾ 61. Այն հասարակական կազմակերպությունը կամ աշխատավորների ընկերությունը, վոր. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատ-

գամավորությունների համար առաջադրում է թեկնածու, պարտավոր է Ոչրուգային ընտրական հանձնաժողովին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

ա) պատգամավորությունների համար թեկնածու առաջադրող ժողովի կամ նիստի արձանագրությունը՝ ստորագրված Նախագահության անդամների կողմից, ցույց տալով նրանց տարիքը, բնակության վայրը, թեկնածու առաջադրող կազմակերպության անունը, մատնանշելով պատգամավորությունների թեկնածուներ առաջադրող ժողովի կամ նիստի տեղը, ժամանակը և մասնակիցների թիվը, ըստ վորում արձանագրությունների մեջ պետք է ցույց տալ պատգամավորության թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, նրա տարիքը, բնակավայրը, կուսակցականությունը, զբաղմունքը.

բ) պատգամավորության թեկնածուի դիմումը, վոր նա համաձայն է քվեարկվելու նրան առաջադրող կազմակերպության կողմից տվյալ ընտրական ոկրուգում։

ՀՈԴՎԱԾ 62. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուն կարող է քվեարկվել միայն մի ոկրուգում։

ՀՈԴՎԱԾ 63. Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի հրաժարումը պատգամավորության թեկնածուին գրանցելուց, կարելի է բողոքարկել յերկու որվա ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վորի վորոշումը վերջնական է։

ՀՈԴՎԱԾ 64. Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի հրաժարումը թեկնածուին գրանցելուց, կարելի է բողոքարկել յերկու որվա ընթացքում միութենական ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի Ընտրական հանձնաժողովին, իսկ վերջինի վորոշումը—Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վորի վորոշումը վերջնական է։

ՀՈԴՎԱԾ 65. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության գրանցված յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը, կուսակցականությունը և թեկնածուն առաջադրող հասարակական կազմակերպության անունը հրապարակվում են համապատասխանորեն Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի կողմից վոչ ուշ, քան ընտրություններից 25 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 66. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորությունների բոլոր գրանցված թեկնածուները պարտադիր կերպով պետք է մտցվեն ընտրական բյուլետենի մեջ։

ՀՈԴՎԱԾ 67. Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը և Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը պարտավոր են վոչ ուշ, քան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններից 15 որ առաջ տպել ընտրական բյուլետենները և ուղարկել բոլոր Շրջանային ընտրական հանձնաժողովներին։

ՀՈԴՎԱԾ 68. Ընտրական բյուլետենները տպվում են համապատասխան ընտրական ոկրուգի բնակչության լեզուներով։

ՀՈԴՎԱԾ 69. Ընտրական բյուլետենները տպվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով և այն քանակությամբ, վոր ապահովվի ընտրական բյուլետենների ժամանակաբաշխումը բոլոր ընտրողներին։

ՀՈԴՎԱԾ 70. Յուրաքանչյուր կազմակերպության, վորն առաջադրել է Ոկրուգային ընտրական հանձնաժողովում գրանցված թեկնածու, ինչպես նաև ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացուն իրավունք է ապահովվում անարգել կերպով ագիտացիա անել այդ թեկնածուի համար ժողովներում, ժամուլում և այլ ձևերով՝ համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության 125-րդ հոդվածի։

ԳԼՈՒԽ VII

ՔՎԵԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 71. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունները կատարվում են մի որվա ընթացքում, վորն ընդհանուր է ամբողջ ԽՍՀՄ համար։

ՀՈԴՎԱԾ 72. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների որը սահմանվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության 54-րդ հոդվածի, վոչ ուշ, քան ընտրությունների ժամկետից 2 ամիս առաջ։ Ընտրությունները կատարվում են վոչ աշխատանքային որում։

ՀՈԴՎԱԾ 73. Շրջանային ընտրական հանձնաժողովը ընտրություններից առաջ վերջին 20 որերի ընթացքում ամեն որ հրապարակում կամ վորևե այլ միջոցով լայնորեն հայտարարում է ընտրողներին ընտրությունների որը և ընտրությունների տեղը։

ՀՈԴՎԱԾ 74. Ընտրողներն իրենց ձայնը տալիս են ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 12-ը։

ՀՈԴՎԱԾ 75. Ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ից, Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ, ստուգում է քվեատուփերը և սահմանված ձևով կազմած ընտրողների ցուցակի առկայությունը, որից հետո փակում և կնքում է տուփերը հանձնաժողովի կնիքով և հրավիրում է ընտրողներին սկսելու ձայներ տալը։

ՀՈԴՎԱԾ 76. Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ, դրա համար ներկայանալով քվեարկության համար հատկացված շենքը, ըստվորում ընտրողներն իրենց ձայները տալիս են՝ ընտրական տուփի մեջ ծրարներում ներփակված ընտրական բյուլետենները գցելու միջոցով։

ՀՈԴՎԱԾ 77. Ընտրությունների համար հատկացված շենքում առանձնացվում է հատուկ սենյակ՝ բյուլետենները լրացնելու համար, որտեղ քվեարկության ժամանակ արգելվում է որևե մեկի ներկայությունը, այդ թվում նաև Շրջանային ընտրական հանձնաժողովի անդամներինը, բացի քվեարկողներից. բյուլետենները լրացնելու համար մի քանի ընտրողներ միաժամանակ սենյակ ներս թողնելու դեպքում, սենյակը պրոք է սարքավորված լինի միջնորմներով կամ վարագույրներով միաժամանակ ներս թողած ընտրողների թվի համեմատ։

ՀՈԴՎԱԾ 78. Մտնելով ընտրական շենքը, ընտրողը Շրջանային ընտրական հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում է կամ պասպորտը, կամ կոլխոզային գրքույկը, կամ պրոֆմիութենական տոմսը, կամ այլ ունձնավկայական և ընտրողների ցուցակով ստուգվելուց ու ընտրողների ցուցակում նշանակվելուց հետո, ստանում է սահմանված ձևի ընտրական բյուլետեններ ու ծրար։

ՀՈԴՎԱԾ 79. Ընտրությունների համար «քվեարկման իրավունքի վկայականով» շենք յուկած մարդկանց վերաբերմամբ, համաձայն սույն «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնագրության» 15-րդ հոդվածին, Շրջանային ընտրական հանձնաժողովը կազմում է հատուկ ցուցակ, որը կցվում է ընտրողների ցուցակին։

ՀՈԴՎԱԾ 80. Ընտրական բյուլետենները լրացնելու համար հատկացված սենյակում ընտրողն ընտրական յուրաքանչյուր բյուլետենում թողնում է այն թեկնածուի ազգանունը, որի համար քվեարկում է, ջնջելով մյուսներինը, ներփակելով բյուլետենները ծրարի մեջ,

ընտրողն անցնում է այն սենյակը, որտեղ գտնվում է Շրջանային ընտրական հանձնաժողովը, և ընտրական բյուլետեններ պարունակող ծրարը գցում է ընտրական քվեատուփը։

ՀՈԴՎԱԾ 81. Այն ընտրողները, որոնք անգրագիտության կամ ֆիզիկական որևե թերության պատճառով հնարավորություն չունեն ինքնուրույն կերպով լրացնելու ընտրական բյուլետենները, իրավունք ունեն ընտրական բյուլետենները լրացվող սենյակը հրավիրել իրենց ցանկացած ուրիշ ընտրողի՝ ընտրական բյուլետենները լրացնելու համար։

ՀՈԴՎԱԾ 82. Ձայներ տալու ժամանակ ընտրական շենքում ընտրական ագիտացիա թույլ չի տրվում։

ՀՈԴՎԱԾ 83. Ընտրական շենքում կարգապահության համար պատասխանատվություն է կրում հանձնաժողովի նախագահը, և նրա կարգադրությունները բոլոր ներկա գտնվողների համար պարտադիր են։

ՀՈԴՎԱԾ 84. Ընտրությունների որվա գիշերը, ժամը 12-ին, Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայներ տալը հայտարարում է ավարտված և հանձնաժողովը սկսում է բաց անել ընտրական տուփերը։

20555
38

ԳԼՈՒԽ VIII

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 85. Այն շենքում, որտեղ Շրջանային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, հաշվառման ժամանակ իրավունք ունեն ներկա լինելու հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների հատկապես այդ բանի համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 86. Շրջանային ընտրական հանձնաժողովը, բաց անելով քվեատուփերը, ստուգում է տրված ծրարների թիվը քվեարկությանը ժամանակցող մարդկանց թվի հետ և ստուգման արդյունքները մտցնում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 87. Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը բաց է անում ծրարները և Շրջանային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ կարդում քվեարկման արդյունքները, ըստ յուրաքանչյուր բյուլետենի։

ՀՈԴՎԱԾ 88. Քվեարկության արդյունքների գրանցումը կատարվում է ըստ Միության Խորհրդի ընտրությունների և ըստ Ազգությունների Խորհրդի ընտրությունների առանձին-առանձին։

ՀՈԴՎԱԾ 89. Պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի համար կազմվում է յերկու որինակ հաշվեթերթիկ՝ հանձնաժողովի քարտուղարի և այդ բանի համար լիազորված Շրջանային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից։

ՀՈԴՎԱԾ 90. Անվավեր են համարվում.

ա) չսահմանված ձևի և գույնի բյուլետենները.

բ) առանց ծրարի կամ վոչ սահմանված ձևի ծրարով տրված բյուլետենները.

գ) այն բյուլետենները, վորոնք պարունակում են ընտրվելիք պատգամավորների թվից ավելի թեկնածուներ։

ՀՈԴՎԱԾ 91. Ընտրական բյուլետենի վավերական լինելու մասին կասկած ծագելու դեպքում հարցը լուծում է Շրջանային ընտրական հանձնաժողովը քվեարկությամբ, վորը նշվում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 92. Շրջանային ընտրական հանձնաժողովը սահմանված ձևով կազմում է քվեարկման յերեք որինակ արձանագրություն, վոր ստորագրում են Շրջանային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, վորոնց թվում անպայման նախագահը և քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 93. Քվեարկման արձանագրության մեջ Շրջանային ընտրական հանձնաժողովը պետք է ցույց տա՝

ա) ձայներ տալու ժամանակի սկիզբը և վերջը.

բ) ընտրողների ցուցակի համաձայն ձայն տված ընտրողների թիվը.

գ) «քվեարկման իրավունքի վկայականներով» ձայն տված ընտրողների թիվը.

դ) տրված ծրարների թիվը.

ե) Շրջանային ընտրական հանձնաժողովին տրված դիմումների և գանգատների համառոտ բովանդակությունը և Շրջանային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները.

զ) ձայները հաշվելու արդյունքներն ըստ յուրաքանչյուր թեկնածուի։

ՀՈԴՎԱԾ 94. Ձայների հաշվելն ավարտելուց և արձանագրությունը կազմելուց հետո, հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկման արդյունքները հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ։

ՀՈԴՎԱԾ 95. Շրջանային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկման արձանագրության մի որինակը, Միության Խորհրդի պատգամավորության թեկնածուների հաշվեթերթիկների յերկու որինակի հետ միասին, սուրհանդակի միջոցով, 24 ժամվա ընթացքում, ուղարկվում է Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովին։ Շրջանային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկման արձանագրության յերկրորդ որինակը, Ազգությունների Խորհրդի պատգամավորության թեկնածուների հաշվեթերթիկների յերկու որինակների հետ միասին, 24 ժամվա ընթացքում, սուրհանդակի միջոցով, ուղարկվում է Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 96. Բոլոր ընտրական բյուլետենները (վավերական և անվավեր ճանաչվածներն առանձին-առանձին), Միության Խորհրդի վերաբերյալն առանձին և Ազգությունների Խորհրդի վերաբերյալն առանձին, պետք է կնքվեն Շրջանային ընտրական հանձնաժողովի կնիքով և քվեարկության արձանագրության յերրորդ որինակի ու կնիքի հետ միասին Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հանձնվեն պահպանելու՝ քաղաքներում—աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդներին, իսկ ռայոնների բաժանված քաղաքներում—աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդներին, գյուղական վայրերում — աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդներին։

ՀՈԴՎԱԾ 97. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների վրա պարտականություն է դրվում պահպանելու ընտրական բյուլետենները, մինչ համապատասխան ոկրուգի պատգամավորների մանդատները հաստատվեն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից։

ՀՈԴՎԱԾ 98. Ոկրուգային ընտրական հանձնաժողովը ձայները հաշվում է Շրջանային ընտրական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա։

ՀՈԴՎԱԾ 99. Այն շենքում, վորտեղ Ոկրուգային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, իրավունք ունեն ներկա լինելու հաշվառումը հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների հատկապես դրա համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 100. Յուրաքանչյուր թեկնածուի համար Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմում է յերկու որինակ հաշվեթերթիկ,

վորտեղ նշվում է պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայների թիվը։

ՀՈԴՎԱԾ 101. Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմում է քվեարկման յերկու որինակ արձանագրություն, վորն ստորագրում են Ոկրուգային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, վորոնց թվում անպայման նախագահը և քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 102. Ոկրուգային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է նշված լինի.

ա) ոկրուգի ընտրողների ընդհանուր թիվը.

բ) քվեարկմանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) ձայների թիվը, վորոնք տրված են պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի համար։

դ) Ոկրուգային ընտրական հանձնաժողովին տրված դիմումների և գանգատների հակիրճ շարադրությունը և Ոկրուգային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները։

ՀՈԴՎԱԾ 103. Ձայների հաշվարկումից վոչ ուշ, քան 24 ժամ հետո Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահն արձանագրության առաջին որինակը, հաշվեթերթիկի հետ միասին, կնքված, սուրհանդակի միջոցով պարտավոր են ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, արձանագրության յերկրորդ որինակը — Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական հանրապետության, ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 104. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուն, վորն ստացել է ձայների բացարձակ մեծամասնություն, այսինքն՝ ոկրուգում տրված և վավերական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, համարվում է ընտրված։

ՀՈԴՎԱԾ 105. Արձանագրությունն ստորագրելուց հետո Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը կարդում է ընտրությունների արդյունքները և Միության Խորհրդի պատգամավոր ընտրված թեկնածուին վկայական և տպիս ընտրված լինելու մասին։

ՀՈԴՎԱԾ 106. Արձանագրությունն ստորագրելուց հետո Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը կարդում է ընտրությունների արդյունքները և Ազգությունների Խորհրդի պատգամավոր ընտրված թեկնածուին վկայական և տպիս ընտրված լինելու մասին։

ՀՈԴՎԱԾ 107. Յեթե թեկնածուներից և վոչ մեկը չի ստացել ձայների բացարձակ մեծամասնություն, համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովը այդ մասին հատուկ նշում է արձանագրության մեջ և հաղորդում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և Ազգությունների Խորհրդի ընտրությունների հանրապետության, ինքնավար մարզի կամ ազգային ոկրուգի Ընտրական հանձնաժողովին, և միաժամանակ հայտարարում է ամենաշատ ձայներ ստացած յերկու թեկնածուների վերաքվեարկումը, ինչպես նաև նշանակում է վերաքվեարկման որը վոչ ուշ, քան ընտրությունների առաջին շրջանը լրանալուց յերկու շաբաթ հետո։

ՀՈԴՎԱԾ 108. Յեթե ոկրուգում տրված ձայների քանակն այդ ոկրուգում քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների կեսից քիչ է, Միության Խորհրդի ընտրությունների կամ Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը այդ մասին հատկապես նշում է արձանագրության մեջ և անհապաղ հայտնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և Ազգությունների Խորհրդի ընտրությունների հանրապետության, ինքնավար մարզի ընտրական հանձնաժողովին, ըստ վորում այդ դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը առաջին ընտրություններից հետո վոչ ուշ, քան յերկու շաբաթվա ժամկետում նշանակում է նոր ընտրություններ։

ՀՈԴՎԱԾ 109. Պատգամավորությունների թեկնածուների վերաքվեարկումը, ինչպես նաև անվավեր ճանաչված ընտրությունների փոխարեն նոր ընտրությունները տեղի յեն ունենում առաջին ընտրությունների համար կազմված ընտրողների ցուցակներով և ամբողջովին համապատասխան սույն «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնագրության»։

ՀՈԴՎԱԾ 110. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորի դուրս գալու դեպքում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը, յերկշաբաթյա ժամկետում, նշանակում է համապատասխան ընտրական ոկրուգում նոր պատգամավորի ընտրության ժամկետը, բայց վոչ ուշ, քան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորը դուրս գալուց յերկու ամիս հետո։

ՀՈԴՎԱԾ 111. Ցուրաքանչյուր վոք, ով բռնության, խարիրության, սպառնալիքի կամ կաշառքի միջոցով խոչընդոտ կհանդիսանա ԽՍՀՄ քաղաքացուն՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավոր ընտրելու և ընտրվելու նրա իրավունքն իրականացնելու գործում—պատիժվում է ազատազրկմամբ մինչև յերկու տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 112. Խորհրդի պաշտոնատար անձը կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վորը կեղծել է ընտրական փաստաթղթերը կամ գիտավորյալ կերպով ձայները սխալ է հաշվել, պատժվում է ազատազրկմամբ մինչև 3 տարի ժամանակով։

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 9 հուլիսի 1937 թ.

☆

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿՈՒՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ VII ԳՈՒՄԱՐՄԱՆ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

			Եջ
Գլուխ	I.	Ընտրական սիստեմը	3
Գլուխ	II.	Ընտրողների ցուցակները	4
Գլուխ	III.	Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի Ընտրությունների ընտրական ոկրուգները	6
Գլուխ	IV.	Ընտրական շրջանները	7
Գլուխ	V.	Ընտրական հանձնաժողովները	8
Գլուխ	VI.	ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորների համար թեկնածուներ առաջադրելու կարգը	12
Գլուխ	VII.	Քվեարկման կարգը	15
Գլուխ	VIII.	Ընտրությունների արդյունքների վորոշումը	17

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿՈՒՐ

4072

Редактор *Чатыньян П. А.*

Тех. редактор *Жданович Л. М.* Корректор *Акопян С.*

Сдано в набор 20 октября 1937 г., подписано в печать 31 октября 1937 г.
формат 63x84/16. Объем 1½ п. л. Тираж 5.500

Уполобллит №Ч-5862. Типография Обл. армянского издательства „Большевик"
(Ростов-Дон, Ворошиловский пр. 27). Заказ № 1989.

«Ազգային գրադարան»
NL0195261

Ц 10485

գինը 25 կոպ.
цена 25 коп.

ПОЛОЖЕНИЕ

О ВЫБОРАХ В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СОЮЗА ССР

На армянском языке

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО
„БОЛЬШЕВИК"
Ростов-Д. Ворошиловский пр. № 27